

ԽՈՍԹ ՍԻՐՈՅ ԵՒ ԻՄԱՅՈՒԹԵԱՆ

Առ Ուսուցիչն՝ Գերայ. Սրապիոն Արքեպս. Ուլուհոնեան
Ընդհ. Արքայ Մխիթարեան Մխարանութեան

Այսօր, Ս. Մարկոսի կամարներուն տակ,
Արեւելեան շէնքանքը զգեցած է իր հրավառ պատմութեանը.
Մխիթարայ ոգին, Ս. Ղազարու վանքը,
Հոս են, ներկայ՝ Աստուծոյ խորանին առջեւ.
Ի՞նչ զգալու է Հայուն սիրտը այս մեծ օրուն մէջ,
Երբ երկրի մարդիկն ու երկնի հօր Աստուծոյ,
Կ'ունկնդրեն մեր Նախահարց Շարականները,
Մինչ իր ամպիոնէն, Ծիրանաւոր Ուրպանին,
Գովքը կը հիւսէ Հայ Հանճարին, ու իր ձայնին մէջ,
Կան լայն շարժումները ահեղ Ադրիականին.
Ըսէ՛ք, ի՞նչ զգալու է Հայուն սիրտը այս մեծ օրուն մէջ:

Յաղթանակի օր մ'է ասիկա Հայկեան ազգին համար,
Որուն վիշտը եղաւ մեծ, հաւատքն անխախտ եւ յոյսն անսպառելի,
Յաղթանակի օր մը, որ կը հասնի իր բազում Գողգոթաներէն յետոյ,
Որոնց գիշերներուն ընդմէջէն, գաւկնին սեղմած կուրծքներուն,
Անցան հայ մայրերը, ողջունելու համար մեծ այգաբացը,
Ահա՛ այդ այգաբացէն լոյսի հրաշագեղ հոսանք մը,
Որ փարատելով պերն գմբէթներուն ոսկեղէն մուրը,
Կը շառագունէ Ս. Մարկոսի աւագ խորանը,
Մինչ շուրջըլորեալ վեհանիստ սուրբերն ամէն,
Կ'ունկնդրեն ձեր աղօթքը, ո՛ր դուք Ս. Ղազարու
Դարերու ճամբաներով յառաջացող անխոնջ սերմնացաններ:

Ո՛ր որ կայ Հայուն փառաւորութիւնը, հրաշքը,
Հո՛ն հրնուելու է Հայուն սիրտը.
Ի սէր այս ճշմարտութեան եւ ա՛յս իմացողութեան,
Սիրտս լի է այսօր արտակարգ խնդութիւններով,
Խնդութիւններ՝ որոնք երկնի թռչուններուն հանգումակ,
Կը բեւաժեն իմ յուզեալ վերջիշումներուն վերեւ,
Մինչ Շարականները կ'ուռնին քրքռուն առագաստներու նման,
Ու կեանքով լեցուն անկասելի հովը,
Լայն կը բանայ պատմութեան վարագոյրը անցեալին վրայ. —
Ի՞նչ պերճաշուք տեսարան եւ ի՞նչ խանդավառիչ պատկեր
Պատմութեան այս վերադարձը՝ հրատոյժը հորիզոնի մը վրայ:

Սիրոյ բոլոր ճամբաները բաց են, ուղղութիւնները ճշտուած,
Քալէ՛ անդունդին եզերքէն, որպէսզի հասնիս
Ուր ձիւնապատ զագաթները վե՛ր կը բռնեն կապոյտ երկինք մը,
Ահա՛ Պապեդուդ հողը, Արագած, Մասիսն ու Սիփան,
Ու ահա՛ Արաֆսի, Եփրատի, Ճորոխի եւ Տիգրիսի
Յոգնախոնքն վազքը՝ աղաղակով եւ մոլեգնաշունչ,
Ու ահա՛ հովիտներու խորքին, լեռներու վրայ,
Հայ հաւատքին ամայացած սրբավայրերը,
Որոնց աւերակներուն մէջ, խորտակուած քարերուն վրայ,
Դեռ Աստուծոյ փայլերուն հետքը կայ, մեր Նախնաց շո՛ւնչը.
Ո՛հ, սրբատաշ քարերուն անաղարտ սպիտակութիւնը...

Այո՛, Պատմութիւնը կ'ապրի արիւնիդ մէջ, չե՞ս լսեր,
Երկինք մը լեցնող բիւր բիւրաւոր զանգերուն զօղանքը,
Ու չե՞ս տեսներ, ներկային մէջ երկարող անոր մէկ էջը,
Որ լուսափայլ կը բացուի դէպի սուրբ խորանը. —
Մխիթարայ գաւկններէն միայն ամբարձումն է, — Գլխո՛ւն, —
Կը ճանչնաս դուն զայն ի տղայ տիոց,
Գիտես, որ իր բոլոր հոգիով նուիրեալ մըն է,
Գիտես նոյնպէս, որ ամբարձումն այս ուրախաւոր,
Անօրինակ համեստութիւն մը՝ օրինակելի ողջմտութեան մը մէջ,
Քրիստոնէութեան անդրագոյն խորաններէն մէկուն վրայ,
Այլ բան չէ՛ եթէ ոչ ազգի պատուով մեծ պատիւ մը:

Յառաջացիր դէպի խորանը, սիրելի՛ Արքահայր,
Ու բո՛ղ որ ես յիշեմ քու երիտասարդ հասակը,
Երբ ի Մուրատ-Ռափայէլեան եւ յԱգոլոյ,
Ներամփոփեալ, համեստագոյն եւ խոնուն,
Կը ջամբէիր Աստուծոյ լոյսն ու ազգին սէրը.
Ահ, ի՞նչ փաղք իմաստներ քու փաղք լուրբեանց ծոցին,
Երբ արեգակը կ'արիւնէր ջրանցքներուն կանաչը,
Երբ կրափփայլի կապարագոյն բարձունքներէն,
Յորդանանս կ'իջնէր ու կը տարածուէր
Երկնի լոյսը՝ երկրի խաւարին վրայ.
Ահ, ի՞նչ փաղք իմաստներ քու փաղք լուրբեանց ծոցին:

Ու հիմա՛ պետք, քու դարաւոր Ուխտին նման,
Կը յառաջանաս՝ ուր Աստուծոյ կանչած է քեզ.
Տե՛ս քու շուրջ հոգիներու շարժումը,
Ահա՛ Ալիշանը, Բագրատունին, գոյգ Հիւրմիւզները,
Ահա Հայր Թադէոսն ու Հայր Արսէնը,
Ի՞նչ բերկրութիւն այդ մեծ սրտերուն մէջ.
Ու լսէ՛ Ս. Ղազարու կոչնակներուն զօղանքը,

Որ երկնառափ դաշնագրության մը հանգոյն,
Կ'ողողէ առաւօտեան անպարելի խաղաղութիւնը.
Ամէն կողմ օրհնութիւն է. ու կ'երգեն իմ երգիս մէջ՝
Ինչ որ սէրը կը զգայ, խոկումն յաւէ՛տ կ'ընդգոգէ:

Միլանոյ 7 Դեկտ. 1960

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

ԲԱԺԱԿԱՃԱՌ ԲԺ. ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆԻ

(Եպիսկոպոսական ձեռնադրութեան վերջ, ի պատիւ Վսեմ. Ծիր. Գրիգոր Պետրոս ԺԵ. Կաթողիկոս Պատրիարքի եւ Գերալ. Աբրահայր Սրապիոն Արքեպս. Ուլուիոնեանի տրուած նաշին, Մուրատ-Ռափայէլեան Վարժարան, 30 Հոկտեմբեր 1960):

Վսեմաւիայլ Կարգինալ, Գերապայծառ Աբրահայր,

Վերադառնալ այս յարկին տակ, ուր մեր պատանութիւնը սահեցաւ, վերանորոգուիլ ըսել է ո՛չ միայն հոգեպէս՝ այլեւ ֆիզիքապէս. ու ֆիզիքական առողջ ուժին մէջն է որ ներշնչեալ հոգին կը նախադրայ ու կ'երգէ իր լաւագոյն երգերը, նոյն հետայն իջնելով յատակը իր զգացմանց եւ բարձրանալով դադար իր խոկմանց: Հոգեմտային այս մթնոլորտով լուսաւորեալ եւ բարախուն, Իտալիոյ Հայ Մշակութային Միութեան կողմէ ի սրտէ կը շնորհաւորեմ Ուսուցիչս, Նորընտիր Արքեպիսկոպոս Գերալ. Սրապիոն Վրդ. Ուլուհոնեանը, մաղթելով որ իր հովանաւորած դարաւոր Միաբանութիւնը շարունակէ անյողգողը ընդառաջել ա՛յն ճամբաներուն վրայ՝ ուր ծաղկեցան բարիքն, գեղեցկին եւ ճշմարտին ծաղիկները, զուգընթացաբար մեր ազգային իմացականութեան ջահերուն հրաբորման, համամարդկային մտածողութեանց լայն հորիզոններով շրջանակաւորուած:

Նոյնպէս Իտալիոյ Հայ Մշակութային Միութեան կողմէ, Նորընտիր Արքեպիսկոպոս Գերալ. Սրապիոն Վ. Ուլուհոնեանի կը ձօնեմ «Leonardo da Vinci» գեղարուեստական շքեղ աշխատասիրութիւնը, իբրեւ գրաւական անթառամ սիրոյ եւ անվախճան բերկրութեան:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՑՈՒՄ

Երանանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՑՈՒՄ

ԵՐԱՆԱՆՔ

ՊԱՏՐԱՍՏԵՑ

Հ. ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՏԱՅԵԱՆ

ՀԱՏՈՐ Բ.

Աստուածածնի տօներ - Ծնունդ - Յայտնութիւն, հանդերձ ութօրէքով - Աւագ տօներ - Առաքելոց, ՀԲ. աշակերտաց - Յովնանու մարգարէին

Մեծադիր, էջ 436

1960

Գիմ՝ 27 տոլար

ՀԱՏՈՐ Դ.

ՂԱԶԱՐՈՒ ՅԱՐՈՒԹԵՆԷՆ - ԶԱՏԻԿ

Մեծադիր, էջ 414

1954

Գիմ՝ 25 տոլար

ՀԱՏՈՐ Ե.

ԶԱՏԻԿԷՆ - ՀՈԳԵԳՍԼՈՒՍ

Մեծադիր, էջ 558

1957

Գիմ՝ 31 տոլար

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ.

ՀԱՏՈՐ Գ.

Որ պիտի պարունակէ

Ս. Սարգսի

Եւ Մեծ-Պահլի

բոլոր Շարականները,

Բուն Բարեկենդանէն

մինչեւ

Ղաղարու Յարութիւն,

բաժնուած

վեց պրակներու

Գիմի ուղղակի հեղինակին.

P. Léonce Dayan - VENISE (Italie)